

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.7. 77 տարածքի 2004թ. ապրիլ ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, 2004թ. ապրիլին օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում և ցածր նորմայից 1 աստիճանով:

Հյուսիս-արևմուտքից ցուրտ օդի ներթափանցմամբ պայմանավորված չափազանց ցածր ջերմաստիճան գրանցվել է ապրիլի 5-ի գիշերը, երբ օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 8-13 աստիճանով: Նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է -16 -21°C (Մասրիկում՝ -23°C), Լոռիում՝ -11 -16°C , Տավուշում, Արարատյան դաշտում և Սյունիքի նախալեռներում՝ -5 -10°C , Սյունիքի հովիտներում՝ -2 -4°C : Այդ օրը գրանցված նվազագույն ջերմաստիճանները ցածր են եղել ապրիլին երբևէ գրանցված բացարձակ նվազագույն ջերմաստիճաններից: Ցածր է եղել ջերմաստիճանը նաև ապրիլի 16-18-ին և 26-28-ին:

Բարձր ջերմաստիճան է գրանցվել ապրիլի 10-15-ին, երբ օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 6-8 աստիճանով:

Ապրիլի առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում գրանցվել է $+30$ $+31^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում, Սյունիքի նախալեռներում, Լոռիում, Տավուշում և Արցախում՝ $+24$ $+29^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+16$ $+21^{\circ}\text{C}$: Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում և լեռնային առանձին շրջաններում այդ օրերին օդի առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է վերջին 100 տարվա բացարձակ առավելագույն արժեքները:

Ապրիլի 2-5-ին, 15-26-ին և 29-30-ին դիտվել են տեղումներ, լեռնային և արևելյան շրջաններում՝ առանձին օրեր ձյան տեսքով: Ամսական տեղումների քանակը շրջանների մեծ մասում բարձր է եղել նորմայից և կազմել է՝ Արարատյան դաշտում (Արտաշատում՝ 209%), Գեղարքունիքում (Գավառում՝ 250%), Տավուշում (Իջևանում՝ 194%), Լոռիում, Շիրակում, Սյունիքի նախալեռներում 100-156%-ը, Քաջարանում, Կապանում, Թալինում այն պակաս է եղել նորմայից և կազմել է նորմայի 40-75%-ը:

Մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկը պահպանվել է 2500 մ և ավելի բարձրությունների վրա:

Ապրիլի 2-4-ին, 15-16-ին, 22-24-ին, 28-29-ին Ապարանում, Ֆանտանում, Գյումրիում, Լոռիում, Գեղարքունիքում և Արարատյան դաշտում դիտվել է քանու ուժգնացում: Քանու արագությունը հասել է 16-20 մ/վրկ, պոռթկումները՝ 25-30 մ/վրկ:

Ապրիլին 22-ին Տաշիրում, 23-ին՝ Թալինում դիտվել է կարկուտ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը միջինացված ձևով կազմել են իրենց նորմաների մոտ 80-100%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 16 սմ-ով և 2004թ. ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 1897.54 մ, որն 2003թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 43 սմ-ով: